ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 6, 1962 Общественные науки

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԵՐՈՒՄ

ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК СССР

ОТДЕЛЕНИЕ ЛИТЕРАТУРЫ И ЯЗЫКА

«Տեղեկագրի» երկրորդ բողարկումը բացվում է Ռ. Ի. Ավանեսովի «Մի քանի մտքեր լեզվաբանության բնագավառի աշխատանքների մասին՝ կապված ՍՄԿՊ XXII համագումարի որոշումների հետ» հոդվածով: Հեղինակը նշում է, որ մեր լեզվաբանությունը հետ է մնում տեսության բնագավառում, լեզվաբանական ինստիտուտները մեր հասարակության պրակտիկ պահանջներին դեռևս բավարար չեն պատասխանում. լեզվաբանական ինստիտուտների պլանում նշանակալից տեղ չեն գրավում գիտա-տեղեկանքային կոլեկտիվ աշխատանքները, այդ ինստիտուտներում, մասնավորապես ռուսաց լեզվի ինստիտուտում, բույլ է աշխատանքը երիտասարդ կադրերի առաջ քաշման ուղղությամբ. ՍՍՌՄ ԳԱ լեզվաբանական ինստիտուտներում վերջին տարիներս ասպիրանտների ընդունելությունը խիստ կրճատվել է:

Հեղինակը նկատում է, թե XXII համագումարի կողմից մեր առաջ դրված խնդիրները հաջողությամբ կարելի է լուծել այս բերությունները վերացնելով:

Վ. Ի. Բերկովսկու «Ռուսիստ-լեզվաբանների մի քանի խնդիրների մասին» հոդվածում առաջ է քաշվում ռուսաց լեզվի խոր ու բազմակողմանի ուսումնասիրության անհրաժեշտությունը, մանավանդ այն բանից հետո, երբ, ինչպես նշված է պարտիայի նոր Ծրագրում, ռուսաց լեզուն դարձել է մեր երկրի ազգամիջյան լեզուն:

Ս. Կ. Շաումյանն իր «Կառուցվածքային լեզվաբանության հրատապ խնդիրները» հոդվածում լեզվաբանությունը դիտում է որպես կիբերնետիկայի ճյուղերից մեկը և այդ ուղղությամբ քննարկում լեզվաբանության տարբեր հարցեր:

Լ. Յա. Գինզբուրգը «Գերցենի «Այն ափից» հոդվածում մեծ մտածողի և հեղափոխականի ստեղծագործության ընդհանուր ֆոնի վրա քննարկում է «Այն ափից» ստեղծագործությունը, որպես 1848 թ. դեպքերից հետո Գերցենի ունեցած հոգեկան դրամայի արտահայտություն:

Ռ. Յա. Բայնհնայի «Ժամանակների կապի մասին» հոդվածում քննարկվում է Կ. Ֆեդինի ստեղծագործությունը՝ նրա հորաբարական նշանակության տեսակետից:

Գորկու «Օգոր Բուլչով» դրամայի ստեղծման պատմությանն է նվիրված Վ. Վ. Նովիկովի «Մ. Գորկու ստեղծագործական լաբորատորիայից» հոդվածը: Հեղինակը առանձնապես ընդգծում է, թե ինչպես Գորկին ընտրելով նախատիպը, այնուհետև այն երկար ստեղծագործական մշակման է ենթարկում՝ ձգտելով գտնել նրանցի պայմանավորվածությունը պատմական անհրաժեշտությամբ:

Գորկուն շատ է հետաքրքրել բուրժուական դասակարգից նրա լավագույն ներկայացուցիչների անջատումը և իր դասակարգին հակադրվելը: Այս պրոցեսի մեջ Գորկին տեսնում է կապիտալիզմի նեխման ու հայրայման օրինաչափության դրսևորումը:

ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ բաժնում հրապարակված են Գերցենի նորահայտ նամակը Ս. Լ. Լևիցկուն, ինչպես նաև «Կոլոկոլում» տպված մի անանուն հոդվածի հեղինակի կարծիքը Չերնիշևսկու մասին, սլավոնագետների Բելգրադի խորհրդակցության նյութերը, Գերցենի երկերի նոր հրատարակության մասին, Ռուբեն Իվանովիչ Ավանեսովի ծննդյան 80-ամյակին նվիրված հոդված և այլ նյութեր:

ԽՐՈՆԻԿԱ բաժնում տեղավորված են նյութեր ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Գրականության և լեզվի բաժանմունքի ընդհանուր ժողովի, սլավոնագետների միջազգային կոմիտեի հանձնաժողովի խորհրդակցության, Մ. Վ. Լոմոնոսովի ծննդյան 250-ամյակի կապակցությամբ ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի տարբեր ինստիտուտներում տեղի ունեցած ժողովների և գիտական սեսիաների, «Սովետական գրականության պատմության» պրոսպեկտի քննարկմանը նվիրված համամիութենական խորհրդակցության, սովետական ժամանակակից դրամատուրգիայի վերաբերյալ դիսկուսիայի և այլ հարցերի վերաբերյալ:

ИСКУССТВО

1962, № 2, 3

Ամսագրի Երկրորդ համարը սկսվում է ՍՍՌՄ ժողովրդական նկարիչ Ս. Գերասիմովի «Անցյալի մասին խոհերով» հոդվածով:

Քննություն նեբարկելով 1961 թ. Մոսկվայում բացված Համամիութենական գեղարվեստական ցուցահանդեսը ընդհանրապես, Ս. Գերասիմովը նշում է ժամանակակից սովետական կերպարվեստում նկատվող դրական առաջխաղացումը՝ հեռացումը զոզմաներից ու սխեմաներից, երիտասարդության էնտուզիազմը և կապը կյանքի առաջավոր երևույթների հետ, ազգային արվեստների առավել զաղափարական մերձեցումը, միաժամանակ նշում է այն կարևոր դերն ու նշանակությունը, որ պետք է ունենա արվեստագետը հասարակական կյանքում՝ թե իր ստեղծագործությամբ և թե իր իմացական մակարդակով:

Երրորդ համարում Վ. Վանսլովի «Արվեստը և անհատի բազմակողմանի զարգացումը» հոդվածը նվիրված է գեղագիտական և ստեղծագործական մի շարք հարցերի բացահայտմանը:

ՌՍՖՍՌ ժողովրդական նկարիչ Դ. Շմարինովը «Հոգատար լինել տաղանդների հանդեպ» հոդվածում քննադատում է անհատի պաշտամունքի շրջանում մի շարք նկարիչների հանդեպ ցուցաբերված անբույլատրելի վերաբերմունքը, նշում, որ բազմաթիվ բարձրարժեք ստեղծագործություններ անուշադրության են մատնվել: Այդ ամենն արդեն անցյալ է դարձել: Սակայն, մատնանշում է հեղինակը, տաղանդների նկատմամբ այժմ էլ երբեմն բավարար հոգատարություն չի դրսևորվում, շնորհալի երիտասարդ ուժերին, առանձին դեպքերում, ոչ թե քննադատում են անհաջողության համար, այլ բռնում են նրանց վիրավորանքի հանապարհը: Երիտասարդ ստեղծագործողների որոշ անհաջողության պատճառները հեղինակը տեսնում է այն ոչ լրիվ, ոչ բազմակողմանի պրոֆեսիոնալ կրթության մեջ, որ երիտասարդությունը ստանում է բարձրագույն գեղարվեստական հաստատություններում:

Լ. Բելոզորովայի հոդվածը («Մտածողին և մարտիկին», № 2) նվիրված է Կարլ Մարքսի հուշարձանին, որը մեծ հանդիսավորությամբ բացվեց Մոսկվայում 1961 թ. հոկտեմբերի 29-ին: Շարադրելով հուշարձանի հետ կապված մրցանակարաշխությունների և որոշումների սեղմ պատմությունը, Լ. Բելոզորովան բարձր գնահատական է տալիս զաղափարական հստակ գեղարվեստական կերպարով, հետաքրքիր մրտանդամամբ կերտված, քարե և արտահայտիչ կոմպոզիցիոն լուծում ունեցող այդ հուշարձանին, որի հեղինակն է երիտասարդ քանդակագործ Լ. Կերբելը (ճարտարապետներ Ռ. Բեզուց, Ն. Կովալչուկ, Վ. Մակարեիչ, Վ. Մարգուլիս):

Ամսագրի այս համարներում ծավալուն տեղ է հատկացված «1961 թվականի համամիութենական գեղարվեստական ցուցահանդեսը» բաժնին, որտեղ ուշագրավ հոդվածներ են տեղավորել Ա. Յազդովսկայան («Ընանկարիչների ստեղծագործությունը»), Ն. Տրետյակովը («Նշումներ հատյուր-մուտի մասին»), Լ. Ակիմովան («Երգ աշխատանքի մասին»), Ն. Արբամսկին («Մինիատյուրի զենքով»), Ի. Արոլինան («Մտորումներ դիմանկարչության մասին»), Պ. Պավլովը («Մոնումենտալիզմը հաստատային գեղանկարում»): Նրանք միաժամանակ առաջ են քաշում հրատապ հարցեր՝ կապված դիմանկարչության էմոցիոնալ ներգործության և հաստատային գեղանկարի հիմքում ընկած գեղարվեստական արտահայտչականության բազմակողմանիության հետ:

«Նկարիչների համագումարի նախօրյակին» խորագրի տակ իրենց հակիրճ նյութերով հանդես են եկել Ս. Մուրադյանը, Ա. Կոնստանտինոպոլսկին, Ռ. Դոմաշնիկովը, Ի. Սելիվանովը:

1961 թ. Մոսկվայի կենտրոնական ցուցասրահում բացված իննհազգործ վարպետների աշխատանքների ցուցահանդեսին է նվիրված Մ. Յարլոնսկայայի «Ժողովրդի արվեստը» հոդվածը: Թբիլիսիում բացված Ա. Ս. Գրիբոյեդովի հուշարձանին բարձր գնահատական է տալիս Նատալիա Սոկոլովան: Վ. Լապշինը մեծ սիրով և զգացմունքով է արտահայտվում քանդակագործուհի Լ. Պոյի արվեստի մասին: Ն. Վորոնովը հանրագումարի է բերում Լիտվական վիտրաժի հաջողություններն ու նշում այդ բնագավառը նեռումված գեղարվեստական հարարությունները:

Ամսագրի № 2-ում տեղավորված հետաքրքիր նյութերից է Մարա Յոնչևայի հոդվածը՝ նվիրված բուլգար կոմունիստ-նկարիչ Ակեքսանդր Ժենդովին: Համարում գետեղված են Միրել Շանինյանի հուշագրությունները և նկարները «Դանայում, Տոգոյում և Լիբերիայում» խորագրով: Ա. Բոգդանովի նյութը նվիրված է Արաբական միացյալ ռեսպուբլիկայի ազգային տարդիցիաներին և նրա ռեալիստական զարգացմանը: Ս. Երլաշովան հանգամանորեն վերլուծում է բարձր գնահատական է տալիս եբովպական ժամանակակից գեղանկարչությանը: Ի. Գորինը բացահայտում է ժամանակակից հնդկական արվեստում զոյություն ունեցող ուղղությունները, իսկ Մ. Պոկոֆիևայի հոդվածը նվիրված է մեր ժամանակի խոշորագույն սատիրիկներից մեկի՝ ֆրանսիացի ծաղրանկարիչ Ժան Էֆելին, որի բարձրարվեստ հումորին երևանցիները հետաքրքրվել

վորություն ունեցան վերջերս ծանոթանալու Հայաստանի Պետական պատկերասրահում բացված ցուցահանդեսից:

Ժամանակակից արվեստի հարցերի լուսաբանման հետ մեկտեղ ամսագրում տեղ են գտել նաև Վ. Սուրիկովի ստեղծագործության մեջ Պուգաչևի կերպարի (Վ. Կեմենով), Ռենուարի գեղանկարի տեխնիկայի (Ա. Վիններ և Ա. Լակտիոնով), Ն. Արգունովի դիմանկարչական արվեստի տեխնիկայի (Ա. Վիններ և Ա. Լակտիոնով), 19-րդ դարի վերջի թուրմեն նկարիչ Նազար Յումուդսկու ստեղծագործության (Պ. Պոպով) հետ կապված մի շարք հետաքրքիր հոդվածներ:

Հրապարակումների բաժնում տեղավորված են Ա. Կադիևի հոդվածը 16—17-րդ դդ. սկզբի ադրբեջանական բանաստեղծ և նկարիչ Սադիկ-բեկ Ադիշարի «Պատկերման կանոնը» աշխատության մասին, որը Էկրսպա-վեստի վերաբերյալ միակ տեսական երկն է միջնադարյան արևելյան գրականության մեջ, Ա. Զելինսկու հաղորդումը Տալլաշկինոյի վանքի, Ն. Սոսնկոյի ելույթը առաջին ռուս բժշկուհի Կաշևարովա-Ռուդնևայի դիմանկարի մասին: Ամսագրում տեղավորված են նաև Հ. Այվազովսկուն հասցեագրված շնորհավորված երկու նամակներ, որոնց հեղինակները են իտալացի կոմպոզիտոր Դոնիցետտին և բալետի արտիստուհի Մարիա Տալյոնին:

Ամսագրի երկրորդ և երրորդ համարներում զետեղված են նաև մի շարք զրախոսականներ, հետաքրքիր տեղեկություններ արտասահմանյան ամսագրերի էջերից և Սովետական Միության գանազան հանրապետություններում տեղի ունեցած գեղարվեստական երևույթների մասին:

Մ. ՂԱԶԱՐՅԱՆ

Вопросы истории

Ամսագրի 3-րդ համարն սկսվում է պրոֆ. Ս. Մ. Դուբրովսկու «Ակադեմիկոս Մ. Ն. Պոկրովսկին և նրա դերը սովետական պատմագիտության զարգացման մեջ» խոշոր ընդարձակ հոդվածով, որը հրատարակվել է ամսագրի խմբագրական կոլեգիայի ընդլայնված նիստում (համարում հրապարակված է նաև ծավալուն հաղորդագրություն այդ հրատարակման ընթացքի մասին):

Հոդվածում նշված է, որ ակադեմիկոս Պոկրովսկու անվան հետ կապված է սովետական պատմագիտության զարգացման մի կարևոր փուլը: Նրա դիտական ժառանգության և սովետական պատմագիտության զարգացման մեջ նրա տեղի ու դերի ուսումնասիրումը առավել ևս անհրաժեշտ է այն պատճառով, որ Սալինի անձի պաշտամունքի շրջանում այդ ականավոր մարքսիստ պատմաբանի անունը մոռացության է մատնված, ըստ էության ջնջված էր գիտությունից:

Հոդվածագիրը Մ. Ն. Պոկրովսկու կյանքն ու գործունեությունը բաժանում է 3 հիմնական ժամանակաշրջանի: Առաջին՝ մինչև 1905 թ. ռևոլյուցիան, երբ աստիճանաբար ձևավորվում է նրա դեմոկրատական, իսկ ապա նաև ռևոլյուցիոն աշխարհայացքը: Երկրորդ՝ 1905 թ. մինչև 1917 թ., երբ նա մանում է ՌՍԴԲՊ-ի շարքերը և ակտիվ ռևոլյուցիոն գործունեություն ծավալում, այդ շրջանում գրելով մեր հայրենիքի պատմության վերաբերյալ իր հիմնական աշխատությունները: Եվ երրորդ՝ Հոկտեմբերյան ռևոլյուցիայից մինչև իր մահը: Այս շրջանը նշանավորվում է նրա պարտիական, պետական ու գիտամանկավարժական բազմակողմանի և բեղմնավոր գործունեությամբ:

Անդրադառնալով Մ. Ն. Պոկրովսկու «Ռուսաց պատմությանը» և այն գնահատելով որպես մեր երկրի պատմությանը նվիրված առաջին դասընթաց, որը գրված է ռևոլյուցիոն դիրքերից, այնուհետև հոդվածագիրը համառոտակի կանգ է առնում Մ. Ն. Պոկրովսկու այդ հայտնի աշխատության հիմնական դրույթների վրա, ըստ որում հեղինակը մատնանշում է նաև հայրենական պատմության մի շարք կարևոր պրոբլեմների մեկնաբանման հարցում Մ. Ն. Պոկրովսկու լուրջ սխալները:

Սակայն նրա գիտական ու հաղարական առանձին սխալները,—գրում է հեղինակը,—ամենևին չեն կարող նսեմացնել այն մեծ ավանդը, որ նա մուծել է սովետական պատմագրության զարգացման մեջ: Պոկրովսկու աշխատություններում առկա սխալները, անշուշտ, հիմք չեն տալիս նրա անունը գիտությունից դուրս շպրտելու համար: Մեջ բերելով այն բարձր գնահատականը, որ 1920 թ. Վ. Ի. Լենինը տվել է Մ. Ն. Պոկրովսկու «Ռուսաց պատմության» 1-ին և 2-րդ մասերին, հոդվածագիրն ընդգծում է, որ ակադեմիկոս Մ. Ն. Պոկրովսկու պատմագիտական ժառանգությունը, նրա դիտական, մանկավարժական ու կազմակերպչական բազմակողմանի գործունեությունը պետք է դառնան գիտական խոր ուսումնասիրության առարկա, արժանանան պարտիական օբյեկտիվ գնահատականի: Այդպիսի ուսումնասիրության համար բոլոր պայմանները ստեղծված են Սովետական Միության

Կոմունիստական պարտիայի XX և XXII համագումարների պատմական որոշումներով:

Երկրորդ խաղաղ դաղարի շրջանում (1920 թ. հունվար-ապրիլ) բանվոր դասակարգի աշխատանքային սխրագործություններին է նվիրված Կ. Ի. Անտոնովայի հոդվածը, որտեղ մի քանի նոր աղբյուրների հիման վրա լուսաբանված է 1920 թ. սկզբին ժողովրդական տնտեսության վերականգնման համար բանվոր դասակարգի մղած պայքարը: Հոդվածում խոսվում է նաև 1920 թ. համառուսական մայիսմեկյան շաբաթօրյակի մասին՝ որպես Սովետական ռեսպուբլիկայի բանվոր դասակարգի աշխատանքային տոնեգրության փայլուն էջերից մեկի:

Ակադեմիկոս Ա. Մ. Դերբոինը մի ընդարձակ հոդվածով անդրադարձել է ռուս մեծ ճնշաղատ և մտածող, Ռուսաստանում ռևոլյուցիոն դեմոկրատական մտքի հիմնադիր Վ. Ռ. Բելինսկու պատմագիտական հայացքների հիմնական տարրերի բնութագրությանը:

Կղերական պատմագրության, մասնավորապես կարոլիցիզմի պաշտոնական դոկտրինա ներքոմիզմի մերկացմանն է նվիրված պատմական գիտությունների դոկտոր Վ. Ի. Ռուտենբուրգի հոդվածը: Ժամանակակից ռեակցիային ծառայող կղերական պատմաբանների նպատակն է ժողովրդական զանգվածներին հոգևոր ստրկության մեջ պահել բուրժուական զաղափարախոսությունից: Սակայն հետադիմական եկեղեցականների ջանքերն իզուր են. պատմական իրադարձությունների ընթացքն անկասելիորեն հերքում է կղերականներին և իմպերիալիզմի մյուս ծայնափողերին, հաստատելով ստեղծագործական մարքսիզմ-լենինիզմի գիտական մեծ ուժն ու գործուն դերը:

Ամսագրի այս համարում տպագրված են նաև Վ. Գ. Տրուխանովսկու հոդվածը Անգլիայի 1924—29 թթ. տնտեսական զարգացման առանձնահատկությունների մասին և Լ. Գրոսֆելդի հոդվածը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Լեհաստանի նկատմամբ Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի քաղաքականության մասին:

Ամսագրում կոլեկտիվ զրախոսություն է հրապարակված «ՍՍՌՄ պատմագիտության պատմության ակնարկների» 2-րդ հատորի մասին:

Արտասահմանյան պատմագիտությունը բաժնում հրապարակված է Ա. Օ. Զուբարյանի ընդարձակ տեսությունը ամերիկյան ու անգլիական բուրժուական պատմագրության կողմից Բրեստի հաշտության հարցի մեկնաբանության մասին:

Նամակների բաժնում հրապարակված են Պ. Գ. Ռինդյունսկու դիտողությունները Ն. Լ. Բուրինշտեյնի «Ռուսաստանում զյուղացիության հայրայման և այսպես կոչված նախնական կուտակման մասին» հոդվածի առթիվ, որը տպագրվել է ամսագրի անցյալ տարվա 8-րդ համարում: Այդ հոդվածում քննադատվել էր Պ. Գ. Ռինդյունսկու 19-րդ դարի Ռուսաստանի մանր ապրանքային կացությանի մասին հոդվածը:

История СССР

Երկամյա այս հանդեսի 2-րդ համարում զետեղված «Վ. Ի. Լենինը և բանկերի ազգայնացումը մեծ հոկտեմբերի հաղթանակից հետո» հոդվածում, որի հեղինակն է Պետրոզրադի բանկերի ազգայնացման մասնակից Ա. Մ. Գինդինը, փաստաթղթերի հիման վրա, ինչպես նաև որպես ականատես, մանրամասնորեն պատմում է, թե բանկերի ազգայնացման տնտեսական կարևոր միջոցառումը Հոկտեմբերյան ռևոլյուցիայից հետո ինչ պայմաններում իրագործվեց այն ժամանակվա մայրաքաղաք Պետրոգրադում, որտեղ կենտրոնացված էին երկրի գրեթե բոլոր խոշոր բանկերը: Հոդվածում ցույց է տրված Վ. Ի. Լենինի դերը բանկերի ազգայնացումը նախապատրաստելու և իրականացնելու գործում:

«70-ական թվականների ռևոլյուցիոն հարոդնիկությունը Վ. Ի. Լենինի լուսաբանմամբ» հոդվածում Շ. Մ. Լենինը վերլուծում է այն դնահատականները, որ Վ. Ի. Լենինը տվել է հարոդնիկության տարբեր հոսանքներին:

Հանդեսի սույն համարում հրապարակված է նաև Մ. Ի. Կուլիկովի և Վ. Ա. Կոյուկի «Նահապետական համայնքային կարգից դեպի սոցիալիզմ» հոդվածը, որը նվիրված է Սիբիրի Հյուսիս-Արևելքի ժողովուրդների սոցիալ-տնտեսական հարաբերությունների վերկանուցման հարցին:

Բանավեճեր բաժնում ակադեմիկոս Մ. Վ. Նեչկինան հանդես է եկել «Սովետական պատմագիտության պատմության պերիոդիզացիայի բանավեճի արդյունքների շուրջ» խորագրով բնդարձակ հոդվածով:

Հոդվածի վերջում խմբագրությունը նշում է, որ զետեղելով ակադեմիկոս Մ. Վ. Նեչկինայի հոդվածը, խմբագրությունը զանում է, որ տվյալ բանավեճը միանգամայն բեղմնավոր էր և նպաստեց սովետական պատմագրության զարգացման բազմաթիվ հասունացած հարցերի պարզաբանմանը:

Հանդեսի հաղորդումներ, նորեր բաժնում Է. Վ. Կոպալը և Լ. Մ. Տրոֆիմովան անդրադարձել են արտասահմանյան երկրների բուրժուական

մամուլում Վ. Ի. Լենինի 1917—1922 թվականներին հրապարակված նյութերին:

Այս բաժնում հրապարակված են նաև Ս. Մ. Կիրովի «Սովետական պետության բանակի կառուցման նախնական էտապը», Ռ. Խ. Ամինովայի «Միջինասիական կանանց ազատագրության պատմությունից», Դ. Վ. Գավրիլովի «Նոր նյութեր Ֆեդոսեևի խմբակի անկեզալ գրադարանի բախտի մասին», Յու. Յու. Կախկի «19-րդ դարի սկզբում Լիֆլանդիայում ցարիզմի վարած ազգային հաղթականության հարցի շուրջը» հոդվածները:

Քննադատություն և մատենագիտություն բաժնում «Դիտողություններ XIV—XV դդ. ֆեոդալական Ռուսիայի մասին» խորագրով լույս է տեսել Լ. Վ. Չերեպինայի «Ռուսական կենտրոնացված պետության ստեղծումը 14—15-րդ դարերում» հետազոտության մասին Ի. Ի. Սմիռնովի ծավալուն գրախոսությունը, որի շարունակությունը տպագրվելու է հանդեսի հաջորդ համարում: Այս հոդվածում գրախոսողը բնեության առարկա է դարձրել՝ պատմագիտության հարցերը, ռուսական կենտրոնացված պետության ստեղծման սոցիալ-տնտեսական նախադրյալները, պետական հողերի բնույթը, գյուղացիության տպատմության հարցերը, հնակենցության խնդիրը:

Հանդեսում տպագրված են նաև գրախոսություններ:

«ԱՍՌՄ-ի պատմությունը արտասահմանում» բաժնում հրապարակված «Բուրժուական պատմագրության կողմից սովետական գյուղացիության պատմության խեղաթյուրման դեմ» հոդվածում Ա. Ա. Բարսովը նշում է, որ արտասահմանում՝ ԱՄՆ-ում, Անգլիայում, ԳՖՌ-ում, Ֆրանսիայում, Իտալիայում բազմաթիվ ինստիտուտներ զբաղված են սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման հարցերով: Հոդվածագիրը կոնկրետ փաստերով ցույց է տալիս բուրժուական պատմագիտության մի շարք սկզբունքային դրույթների սնանկությունը և հերքում է նրա կողմից տարածվող առասպելները Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի ժամանակ կատարված ագրարային վերափոխումների «տնտեսական հետադիմության», կոլեկտիվացման օբյեկտիվ նախադրյալների բացակայության, Բաղմի կողմից գյուղի անբնդմեջ շահագործման մասին: Հոդվածում համոզիչ կերպով ցույց են տրված կոլտնտեսային կարգի ամրությունն ու կենսունակությունը, սոցիալիստական հողագործության սիստեմի առավելությունը կապիտալիստականի նկատմամբ:

Վ. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ